

# ԳԱՅԼԻ ԳԼԽԻՆ ԱԻԵՏԱՐԱՆ <sup>1)</sup>

ԵՐՈՒԱՆԴ ԳԱԶԱՐԵԱՆ

## I

Անցեալ 1891—92 թականներին, երբ Ռուսաստանի ամբողջ արեւելեան մասում ժողովուրդը սովամահ էր լինում, կոմս Լ. Տոլստոյը, նրան ուղղած հարցին, թէ՛ Բնչ պէտք է անել ժողովրդին փրկելու համար՝ պատասխանեց. «պէտք է սիրել»։ Յետոյ նա բացատրեց իր միտքը թէ՛ սիրելը աւելի կարեւոր է, քան կերակրելը, որովհետեւ սիրելիս՝ չէ կարելի չկերակրել, կոմսի այս կարծիքը կալժակի արագութեամբ տարածեց ամբողջ Ռուսաստանում և մամուլի ու հասարակութեան մէջ տաք վիճարանութիւն առաջացրեց։ Շատերին տարօրինակ էր թւում Տոլստոյի սառնասիրտ անտարբերութիւնը դէպի ժողովրդական սոսկալի արհաւիրքը։ Տոլստոյի նման սրտի տէր մարդը չպէտք է այդքան տեսականօրէն վերաբերէր դէպի այն սարսափելի վտանգը, որ սպառնում էր ժողովրդին... Այլ իրաւ, դեռ շարունակում էր նրա մասին այդ խօսակցութիւնը, երբ մէկ էլ լսեց թէ՛ Տոլստոյ՝ իր ամբողջ ընտանիքով՝ նվիրւել է ժողովրդական ճաշարաններ բաց անելու գործին։ Այդ մասին լրագիրները չաւարարեցին, և շուտով սկսեց ահագին ստորագրութիւն լօգուտ սովաւնների։ Տոլստոյի կախարդիչ անունը դիւթեց հասարակական կարծիքը թէ Ռուսաստանում եւ թէ նոյն իսկ արտասահմանում։ Ամեն կողմից փող էին թափում՝ Տոլստոյի հասցէով, նրա բաց արած ձրի ճաշարանների համար։ Ուրեմն ուռա հանճարեղ գրողի արտասանած «սիրել» խօսքը դատարկ խօսք չէր։ Նա ունեւաւ ահագին գործնական հետեանքներ։ Որ Տոլստոյի բերանում սիրել խօսքը ունի իսկական նշանակութիւն, այդ երեսց նրանից, որ խօսքից չետոյ՝ իսկոյն հետեւեց գործը, իսկոյն արտաշաւուց իրական, շօշափելի կերպով, — «Ռուսաց աշխարհի մեծ մատենագիրը», իր խոր ծերութեան հասակում, ամուսն բան մոռացած՝ իր անձը գցեց հազար տեսակ նեղութիւնների, վտանգների մէջ, սկսեց ժողովրդի հետ հաւաստարապէս ենթարկւել սովի բոլոր վտանգ-

<sup>1)</sup> Այս լօգածի մասին մեր դիտողութիւնները թողնում ենք գալ տակին.

ներին... Այդ գործնական անձնագործութեան օրինակը, և ահնէլ մի մեծ մարդու կողմից՝ անշուշտ մեծ ազդեցութիւն արեց հասարակութեան վրայ և շատ նպաստեց սովեալներին կերակրելու գործին: Սակայն բացի այդ հանգամանքից, — բացի Տոլստոյի մեծ անունից և անձնակրթութեան օրինակից՝ նրա վերադասեալ գործի աջողութեանը նպաստեց և մի ուրիշ հանգամանք: Այդ հանգամանքը սովոր ինքն էր, ժողովրդի հառաչանքն էր, որ քարերին անգամ լեզու էր տալիս: Սովի երևութիւն, ինքն ըստ ինքեան՝ հասարակութեան զգացմունքները տրամադրել էր զէպի բարեգործութիւն, զէպի գործնական մարդասիրութիւն: Եւ ահա, հէնց այդ տրամադրութեան ժամանակն էր, որ Տոլստոյ առաջ ասեց, լիստոյ էլ գործով ցոյց տուց թէ՛ ինչ է նշանակում սիրել ուրիշներին: Հասարակութիւնը մեծ ոգևորութեամբ գնաց նրա ետևից, որովհետեւ Տոլստոյ առաջինը իրագործեց հասարակութեան ցանկութիւնը, որովհետեւ նա հանդիսացաւ ընդհանուր զգացմունքների հեղինակաւոր արտաբերիչ, ժողովրդի մեծամասնութեան, մասսայի ցանկութիւնները և զգացմունքները ամփոփել իր մէջ, արտաբերել ամենալալող պայմաններում, դրաւել, տանել իր ետևից ամբողջը — այդ միայն չափով է հանձարեղ հասարակական գործիչներին: Այս զէպքում՝ թէ գործիչի անձնական ուժերը, և՛ թէ հասարակական ապկամ ահն տրամադրութիւնը՝ անհրաժեշտ պայմաններ են գործի աջողութեան համար: Տոլստոյի մեծ անձնակրթութիւնը բաւական չէ՝ ամբողջին ոգևորելու և գործնական հետեանքներ ստանալու համար, երբ նա, Տոլստոյ՝ չի ամփոփում իր մէջ ամբողջի հոգեկան իղձերը, երբ նա, Տոլստոյ՝ քարոզութիւնը, կամ օրինակը չի ծառայում որպէս մի արտաբերութիւն մեծամասնութեան կամքի: Սովի ժամանակ Տոլստոյի քարոզած և իրականացրած «սէրը» ունեցաւ մեծ գործնական հետեանքներ: Բաց նոյն Տոլստոյ, իր քրիստոնէական սիրու վարդապետութիւնով, հանդէս է դալիս և այժմ, նոյն համոզմունքով, նոյն եռանդով ու հանձարով քարոզում է մարդոց սիրել միմեանց. սիրու, եղբայրութեան զգացմունքով առաջնորդել կեանքի ամեն պայմաններում, — և նրա այդ վե՛ քարոզութիւնը հեզնութեան, ծաղրի ու սրախօսութեանց առարկայ է դառնում՝ այժմեան ռուս հասարակութեան և մամուլի մէջ... Մեր հա՛ հասարակութեանը դուցէ չալոնի չէ Տոլստոյի «Не-дѣлани» չղաածը և այդ չղաածի առիթով առաջացած խօսակցութիւնները, վիճաբանութիւնները, լակ ռուս մամուլի մէջ ահագին չղաւունք առաջացաւ. այդ առթիւ շատ հիմնական հարցեր շօշափեցին մալրաքաղաքների հրատարակութիւնները:

## II

Մարդու վրայ չարձակելը, նրան դատապարտելը աւելի հեշտ է, քան թէ նրան հասկանալը: Առաջին անգամը չէ, որ Տոլստոյ բարձրա-



ցնում է իր ձալը՝ լանուն սիրու, մարդասիրութեան, խղճի և ալ զուտ բարոյական հասկացողութեանց. առաջին անգամը չէ նոյնպէս, որ նա իր քարոզչական ուղղութեան համար՝ ամեն տեսակ լանդիմանութեանց է արժանանում. Նրա կրիտիկոսները լարմար դէպքից օգուտ են քաղում, որ լանդիմանեն մեծ վիպասանին թէ՛ ինչո՞ւ նա դադարեց վէպեր գրելուց, ինչո՞ւ նա զրկում է ռուսաց գրականութիւնը «Պատեւագմ և հաշտութիւն», «Աննա Կարենինա» վէպերի նման թանկագին դանձերից, որ նա կարող է աւել ռուսներին, ինչո՞ւ նա թաղում է գետնի մէջ իր խոշոր գեղարւեստական տաղանդը և սկսել է ինչ-որ լոգածներ գրել, սկսել է բարոյախօսական քարոզներ կարդալ հասանակութեան գլխին. Յետո՛ւ Տոլստոյին լանդիմանում են նրա կրիտիկոսները, որ նա իր լոգածներին մէջ սխալ մտքեր է քարոզում, որ նա, իբր թէ, չի ընդունում գիտութիւնը, լուսաւորութիւնը, որ նա հերքում է աթմեան մարդկութեան ունեցած կուտուրան, և քարոզում է սգիտութիւն, լետադիսութիւն, նախնական մարդոց կեանքի հովական պարզութիւն. Այս վերջին տեսակի լանդիմանութիւնը ալժմ աւելի և աւելի չաճախ է լսում Տոլստոյի հասցէով. Դրանսիացի լալտնի ըմանխտ Էմիլ Զոլան՝ վերջերումս, դէպի երիտասարդութիւնը ուղղած իր ճառի մէջ, նոյնպէս դատապարտեց Տոլստոյի «բարոյագիտական ուղղութիւնը», ի հարկէ, առանց վիշելու իր ճառի մէջ ռուս մեծ վիպասանի անունը. Զոլակի ալժ ճառը տեղիք տւեց Տոլստոյին գրել իր վերովիշեալ լոգածը—«Не-христианство»: Որպէս ներկալացուցիչ հին սերնդի՝ Էմիլ Զոլան, կանգնած բազմաթիւ երիտասարդ ուսանողներին առաջ՝ ինչպէս ասում են՝ իր սիրտը բաց է անում, և աշխատում է, պարզէ ի պարզ, խոստովանել իրանց (հին սերնդի) հաւատալիքները, ձգտումները, գործունէութիւնը՝ բոլոր արժանատիութիւններով ու թերութիւններով հանդերձ. Նկարագրելով «իրանց» ժամանակի (60-ական թւականների) տիրապետող դրական ոգին, պատմելով թէ՛ ինչպէս իրանք հաւատում էին գիտութեան ամենակարող զօրութեանը, ինչպէս մեծ-մեծ լուսեր էին դնում գիտութեան վրայ—թէ՛ նրանով կարելի է լուսաւորել ամբողջ մարդկութիւնը, նրանով կարելի է երջանկութեան դրախտ չինել երկրիս երեսին և ալժ դրախտի մէջ բնակեցնել մարդկային ցեղը՝ առանց որ և է ազգային և դասակարգային խտրութեան՝—Զոլան, ալժ իր վիշտորութիւնների ժամանակ՝ «վերջապէս» խոստովանում է, որ ինքը, իբրև վիպասան, շատ միակողմանի էր հասկացել բնագիտութեան նշանակութիւնը՝ վիպասանութեան համար, խոստովանում է թէ՛ ինքն էլ մի տեսակ «աղանդաւոր» էր, երբ բացի ճիշտ գիտութեան տաժ օրէնքներից ու փաստերից՝ ուրիշ ոչինչ չէր ուզում ընդունել վիպասանութեան մէջ. —Այն ինչ մարդկային կեանքը ունի շատ և շատ գաղտնիքներ, որոնք դեռ չեն ուսումնասիրւած գիտնականօրէն, և որոնք, անշուշտ չափաի խոյս



տան վիպասանի խորը դիտող աչքից... (Ի դէպէ՛ ասել, որ ալդ վիւրջին նկատողութիւնով՝ 1. Զուլան իր ձեռքով ամենախորտակիչ հարւածն է տալիս իր ստեղծած վիպասանական շկոյալին՝ «Նատուրալիզմ» կոչւող)։

Այս բոլորից չնտո՛ղ՝ Ֆրարաիացի հռչակաւոր վիպասանը մի քանի ընդհանուր փիլիսոփայական դատողութիւններ է տալիս կեանքի մասին, որպէս խրատ՝ նոր և անփորձ երիտասարդութեանը։ Նա ասում է, որ մարդոց թշուառութեան գլխաւոր պատճառը անգործութիւնն է, ամեն մարդ պարտաւոր է աշխատել, ամեն մարդ պարտաւոր է կատարել համա մարդկային ընդհանուր աշխատանքի ալն մասը, որ իր բաժինն է կազմում։ Մարդը է. Զուլալի կարծիքով՝ միշտ պիտի աշխատի, միշտ պիտի զբաղւած լինի աշխատանքով, եթէ ոչ, պարապութեան և հանգստութեան ժամանակ՝ նա (մարդը) կը սկսէ զոռ տալ իր երեակակութեանը, կսկսէ վերացական բաների վրայ մտածել, և նրա մէջ կը զարգանալ իդէալիզմ, անորոշ, անհասկանալի ձգտում, — մարդը իր զգացմունքներով, իր մտածմունքներով կը կենդրոնանալ իր մէջ և, ալդպիսով՝ անպէտք կը դառնալ ո՛ր և է աշխատանքի համար։ Այն ինչ աշխատանքը բոլոր առաքինութիւնների մայրն է. նա հեռու է պահում մարդուն վերացական մտածմունքներից, ցնորքներից, իդէալական անվերջ մոլորութիւններից, մարդուն կապում է իրականութեան հետ, կազդուրում, ամրացնում է նրա հոգեկան ուժերը... Աշխատող մարդը միշտ առողջ, միշտ զւարթ, միշտ բարի (?) է լինում, նա շատ հեշտութեամբ մոռանում է իր վշտերն ու ցաւերը, շատ հեշտութեամբ վերականգնում է իր խաղաղ, հանդարտ և ինքնաբաւական կենցաղավարութիւնը։ Ուստի՝ լանոն աշխատութեան, որ էմիլ Զուլալի կարծիքով՝ միշտ տանում է մարդուն դէպի երջանկութիւն, լանոն ալդ հանրամարդկային ամենախելացի միջոցի՝ ապրելու և երջանիկ լինելու՝ Ֆրանսիայի ալժման երիտասարդութիւնը միակ մի բանի պիտի ձգտի, մի նպատակի պիտի ծառայէ՝ — աշխատել, աշխատել և անդադար աշխատել, — և հեռու կենալ ալն տեսակ վարդապետութիւններից, որոնք զարգացնում են մարդու մէջ անորոշ ձգտումներ, զգացմունքներ, որոնք մարդուն սաստիկ բարձրացնելով իր սեփական աչքում, դրանով նրան ստիպում են միշտ բարձր բաների ձգտել, միշտ անբաւական, դժգոհ լինել իր վիճակից։ Իսկ անորոշ ձգտումները, անբաւականութեան, դժգոհութեան զգացմունքները մարդուց իլլում են կեանքի անդորրութիւնը, թունաւորում են նրա կեանքի խաղաղ երջանկութիւնը։ — Այս է Զուլալի միտքը։

Ես չեմ կասկածում, որ ալդ տեսակ «հալրական» խրատներ մեզանից ամեն ոք լսել է՝ առանց Պարիզ գնալու և առանց ուսանող լինելու։ Զեմ կասկածում չեմ ոչնպէս, որ ամեն մի որդիասէր ծնող իր ծնողական պարտականութիւնն է համարում՝ աշխատասիրութեան և չափաւորութեան դասեր

տ. ի իր որդոցը՝ Բաջ եթէ որդիասէր ծնողները խրատներ են կարդում իրանց որդոցը՝ ճրանք ամենեւին չեն էլ կարծում թէ՛ իրանք խոր փիլիսոփայութիւն են անում, և ճրանք տւած խրատական դատողութիւնները ոչ տպւում են լրագիրների մէջ, ոչ էլ ընդհանուր հետաքրքրութեան առարկայ են դառնում Իսկ Զոլան հասարակ մարդ չէ. նա համալսարանէն, անուն է վալելում՝ իբրև տաղանդաւոր վիպասան. նա իր վէպերով մի ահագին դրականութիւն է ստեղծել. Ակամայ կը հետաքրքրւես նրա ամեն մի խօսքով, ակամայ կաշխատես մի առանձին փիլիսոփայական իմաստ որոնել նրա ամեն ասածի ու խօսածի մէջ. Մանաւանդ որ ինքը, ճառախօսն էլ՝ շատ մեծ նշանակութիւն է տալիս իր ճառին. նա խօսում է ի դիմաց ամբողջ մի սերնդի, նա աշխատում է բարոյական աւանդ կտակել երիտասարդութեանը, աչնպիսի աւանդ, որ 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին՝ որպէս մի լուսատու աստղ ծառայէ մարդոց չառաջադիմական ձգտումներին համար. Ահա այս երկրորդական և, միևնույն ժամանակ՝ շատ կարևոր հանգամանքները եղան պատճառ, որ է. Զոլայի ճառում լալտնած մտքերը ընդհանուր ուշադրութեան առարկայ դառան, և այդ ճառի մասին խօսեցին հեղինակաւոր անձինք—Ալ. Դիւմա, Լև Տոլստոյ և ուրիշ նշանաւոր հրապարակախօսներ:

### III

Բանն այն չէ թէ՛ ինչ գործնական հետեանքներ կունենան այս ինչ, կամ այն ինչ երևելի մարդու քարոզութիւնները. մարդկային ազգի ամբողջ պատմութեան մէջ՝ դեռ չէ երևացել այն կախարդը, որ իր քարոզած «նոր ճշմարտութեան» ուժով միանգամից փոխէր պատմութեան ընթացքը, մի գլխական գաւազանի հարածով՝ ստիպէր մարդկութեանը այս կամ այն ուղղութիւնով առաջ գնալ. Դժբաղդաբար, կամ գուցէ և բարեբաղդաբար՝ կեանքի առաջադիմութիւնը ունի իր որոշ, անփոփոխ օրէնքները, որոնք չեն կախած անհատների ոչ բարի և ոչ չար ցանկութիւններից. Եւ հէնց այդ է պատճառը, որ հասարակութեան մէջ գտնւած լուսաւոր խելքի և զգալուն սրտի տէր անհատները՝ միշտ ստիպւած են եղել մենակ մնալ իրանց մեղքերի ու ցանկութիւնների հետ, միշտ ստիպւած են կղել կեանքի առօրեայ, սովորական պահանջներից վեր բարձրանալ և զուտ գաղափարական ոֆերայի մէջ որոնել իրանց մեղքերի, զգացմունքների իրականացումը,— իրանց իղէալը. Եւ քանի բարձր լինի այդ իղէալը, այնքան էլ անմատչելի կը լինի նա մարդոց համար, այնքան էլ՝ իր ալդ փսնմութիւնով, անմատչելիութիւնով՝ կը գրաւէ մարդոց երեակալութիւնը, բաւականութիւն կը տա՝ մարդոց մէջ գոյութիւն ունեցող՝ «անսամանի», «սերացականի» պահանջին. իղէալ էք որոշում— որոշեցէք աչնպէս, որ նա արժանի լինի իր ալդ բարձր կոչմանը, որ նա բաւականութիւն, չափեցում տալ մարդ-



կալին հասարակութեան ամենաազնիւ, ամենասուրբ ձգտումներին... Էմիլ Զոլայի քարոզած և երկինք բարձրացրած աշխատանքի սկզբունքը չի կարող իդէալ համարել ակժմեան մարդկութեան համար, որովհետև նա չի բաւականութիւն տալիս մարդկային հոգու «լինման», «անսահմանի» պահանջին, որովհետև աշխատանքի հասկացողութիւնը չի կապած բարձր ճշմարտութեան, առաքինութեան, արդարութեան հասկացողութիւնների հետ Աշխատանքը ինքն ըստ ինքեան, ոչ առաքինութիւն է և ոչ էլ թերութիւն մարդու համար. այդ մի միջոց է, մի նար է, որով մարդ ի կատար է ածում այն, ինչ որ ունի մտքի մէջ, ինչ որ ցանկանում է նա մտաւոր կամ վերացական կերպով Աշխատանքը մի երկուստի սուր է, որ կարող է ն' բարին կտրել և չարը, ն' անմեղին դիպել, և մեղաւորին՝ Նոյնը կարելի է ասել և գիտութեան տեխնիկայի մասին. օր. քիմիայի կամ մեխանիկայի տւած բոլոր կատարելագործութիւններով՝ կարելի է օգտուել և բարի, ն' չար նպատակների համար... Անա ալս էական հիմունքների վրայ՝ Տոլստոյ բողոքում է Զոլայի դէմ, նրա քարոզած աշխատանքի և գիտութեան իդէալի առիթով:

«Աշխատանքը», — ասում է Տոլստոյ, իր վերլուշեալ «He-đbanie» լսողածում, — «առաքինութիւն չէ, այլ մի պահանջ է, ինչպէս սնունդը: Աշխատանքի նշանակութիւնը բարձրացնել և նրան առաքինութիւն համարել՝ նոյնպիսի անմտութիւն է, ինչպէս և անմտութիւն է՝ առաքինութիւն համարել սննդառութիւնը: Աշխատանքը գիտակցել և հպարտանալ նրանով, ինչպէս միջիւն, — այդ ուղղակի լանցանք է, որովհետև մարդը ակդպիսով աւելի չարասիրտ է դառնում, քան բարի: Այդ չարասրտութիւնն էր պատճառը, որ միջիւնը այնքան դոգոգաբար մերժեց ճպրտին՝ կերակուր և պատսպարան տալ, որովհետև ճպրտը չէր աշխատել ամսոււալ ընթացքում: Նոյն չարասրտութիւնը և միջիւն-ալին գոռոգութիւնն է խօսում և մեր մէջ, երբ փողոցում՝ տեսնելիս աղքատին՝ դողդոջուն ձեռքը մեղ կարկառած՝ փոխանակ անխօս, լուռ նրան օգնելու, մենք արհամարական խօսքերով լանդիմանում ենք նրան:

— Ինչո՞ւ չես աշխատում:

Շարունակենք բերել Տոլստոյի կարծիքները աշխատանքի մասին: «Աշխատանքը ոչ միայն առաքինութիւն չէ, այլ մեր արդի հասարակական ա՛նարդար կարգերի շնորհիւ՝ մեծ մասամբ մի բարոյապէս թմբեցնող միջոց է, — ինչպէս ծխելը, գինին, — որպէս զի մարդ չգիտէ իր կեանքի անկանոնութիւնները, զեղծումները, մեղքերը: — Մ'ըր կարող եմ ես դատողութիւն տալ ձեզ հետ՝ բարոյագիտութեան և հաւատի մասին: Ես պէտք է հրատարակեմ իմ ամենօրեալ թերթը, որ կէս միլիոնի չափ բաժանորդ ունի, ես պէտք է Զիկադօի՝ աշխարհահանդէսը պատրաստեմ, պէտք է փորել տամ Պանամայի ջրանցքը, պէտք է վերջացնեմ հեղինա-

կութիւններէս քոսնութերորդ հատորը և ալլն և ալլ: Եթէ մեր ժամանակի մարդիկ չունենալին մշտական, նրանց բոլորին կլանող աշխատանք,—նրանք չէին կարողանալ ապրել ալնպէս, ինչպէս որ հիմալ են ապրում: Միայն շնորհիւ ալն հանգամանքի, որ դատարկ և, մեծ մասամբ, ֆևսակար աշխատանքով ծածկում են իրանցից ալն հակասութիւնները, որոնց մէջ ապրում են,—շնորհիւ լոկ ալդ հանգամանքի՝ մարդիկ կարողանում են ապրել ալնպէս, ինչպէս որ հիմալ ապրում են...

Տոլստոյի ալս կարծիքների հետ անկարելի է համաձայնել, թէն պէտք է խոստովանել և ալն, որ նա բաց է թողնում մի տեսակետ,—միշտ կարեոր հանգամանք աշխատանքի և աշխատաւոր դասակարգի վերաբերութեամբ: «Դատարկ» և «ֆևսակար» աշխատանք ասելով Տոլստոյ անշուշտ աչիի առաջ ունի ալն թէ՛ ներկալ ժամանակի արդիւնաբերութիւնը մեծ մասամբ արտադրում է մարդկանց զեղխութեան, շռալութեան, կոմիքորտի համար պիտանի ապրանք, քան թէ իսկապէս օգտակար, կենսական անհրաժեշտ մթերքներ... Որ մեր ժամանակի արդիւնաբերութիւնը ամեն ջանք գործ է դնում՝ մարդկանց կուլտուրական պահանջներին բաւականութիւն տալ, որ ալդ կուլտուրական չարմարութիւնները կենսական կարեորութիւն չեն մարդոց համար և, մի և նոյն ժամանակը՝ մարդկալին աշխատանքի ամենամեծ մասն են կլանում,—ալդ ամենը, ի հարկէ, ուղիղ է: Սակալն արդիւնաբերութեան և աշխատանքի մասին խօսելիս՝ չէ կարելի մոռացութեան տալ աշխատաւոր, կամ բանւոր դասակարգի ծաւալեղ դրութիւնը: Պէտք է երբէք չմոռանալ, որ եթէ բանւորը և արհեստաւորը ամբողջ իրանց կեանքում կլանած են աշխատանքով, ալնքան են կլանած, որ «չունչ քայելու» անգամ ժամանակ չունին—դրա պատճառը ալն է, որ ալդ մարդիկ ուտել են ուղում, իսկ նրանց աշխատանքը, դլխաւորապէս ծառալելով գործարանատիրոջ օգտին՝ մշտական կտոր հաց անգամ չի ապահովեցնում աշխատաւորի համար:

Ո՞վ է չինում էլֆելեան աշտարակը—բանւորները. ով է պաորաստում Զիկագուի աշխարհահանդէսը—բանւորները. ով է փորում Պանամալի ջրանցքը—դարձեալ բանւորները... Իսկ ով է վալելում՝ թէ աշտարակների, թէ ջրանցքների և թէ ամեն տեսակ աշխարհահանդէսների տւած բարիքները—ով էլ որ լինի, բաց անշուշտ՝ ոչ բանւորները: Ահա կեանքի ամենամեծ հակասութիւններից մէկը, որոնց մասին չեշտում է ամեն տեղ Տոլստոյ: Ինչպէս պէտք է դուրս գալ ալս հակասութիւններից.—քնչ պէտք է անել, որ աշխատաւոր մարդը կարողանալ վալելի իր աշխատանքի պտուղները: Այս հարցի պատասխանը, է. Զոլալի կարծիքով՝ լինելու է.—Պէտք է աշխատել,—իսկ կոմս Լ. Ն. Տոլստոյ չի համաձայնում նրա հետ և, ալդ հիման վրալ՝ բողոքում է աշխատանքի դէմ:



IV

Ի հարկէ, եթէ աշխատանք ասելով՝ աչքի առաջ ունենանք միայն բանւորներին, արհեստավորներին և առհասարակ՝ աղքատ դասակարգի աշխատանքը, ալն ժամանակ՝ հարցը շատ կը պարզվի: Ալն ժամանակ՝ ուսս հեղինակաւոր գրողի բողոքը՝ աշխատանքի դէմ՝ կը ստանալ տնտեսական-սոցիալական բնաւորութիւն: Բայց իսկութիւնը ալգպէս է. Տոլստոյը բողոքում է ոչ միայն բանւոր դասակարգի լարած աշխատութեան դէմ, ալ առհասարակ՝ ամեն տեսակ խիստ, լարած, կլանած միակողմանի զբաղմունքի դէմ՝ լինի ալ զբաղմունքը մտաւոր թէ ֆիզիկական—միևնոյն է: Նւ ալ է պատճառը, որ նա բանւորներին աշխատանքի վրա էլ նախում է, սրպէս միայն բթացնող, թմրեցնող և մարդու ամբողջ հոգին կլանող աշխատանքի վրա՝ առանց հետաքրքրելու նրանց ճնշած ու զրկած գրութիւնով, առանց կանգ առնելու նրանց աշխատանքի և վարձատրութեան մէջ գտանած զարհուրելի հակասութեան վրա... Տոլստոյի կարծիքով՝ առհասարակ՝ բոլոր մարդիկ՝ հարթած են աշխատանքով, կլանւած են հոգսով, զբաղմունքով, գործով—և ալ է պատճառը, որ նրանք ալգքան խոտասիրտ, անբարեհաճ ու ետական են, ալ է պատճառը, որ նրանք չեն հետաքրքրում բարոյականութեան խնդիրներով: Ուրեմն ամեն բանի չարիքը աշխատանքի, անընդհատ զբաղմունքի մէջն է, և եթէ մարդիկ—ամբողջ մարդկութիւնը—մի քիչ ժամանակ դադարէր աշխատելուց, և ալ ժամանակամիջոցում շարունակ մտածէր իր կեանքի մասին, շարունակ խորասուզէր իր խղճի և զգացմունքների մէջ—ալն ժամանակ, Տոլստոյի կարծիքով՝ ամբողջ մարդկութեան սրտում կը զարթնէր սիրելու սաստիկ պահանջը, որ ալ ժամ քնա՝ է՝ անընդհատ աշխատանքի շնորհիւ: ալն ժամանակ՝ բոլոր մարդկութիւնը կը կապէր սիրոյ, եղբայրութեան, բարեկամութեան ամուր կապերով... Ուրան զբաւի է ալս երևակալութիւնը, Նւ ճշմարիտ մի քիչ մտածենք ալ մասին: Ի՞նչ կը լինէր, եթէ ալ բանը կատարէր,—եթէ բոլոր մարդիկ կանկարծ թողնէին իրանց նեղ ետական, կուսակցական, դասակարգային և աղգալին շահերը, ինտերեսները, թողնէին աշխարհալին շնչին հոգսերը, ձգտումները, մոռանալին նախանձ, վէժխնդրութիւն, կռիւ... և միայն սէր զգալին իրանց մէջ, միայն սիրելու և փոխադարձ սիրւելու ծաւալը գերակշէր մարդոց հոգեկան բոլոր պահանջների վրա: Ի՞նչ կը լինէր ալ ժամանակ, եթէ ինչ կը լինէր՝ դժւար է երևակալել անգամ, բայց որ ալ ամենքի սրտով կը լինէր—անկասկած է: Մարդկալին հոգու բոլոր երջանկութիւնների մէջ՝ սիրոյ տաւ երջանկութիւնը ամենաբարձրն է, ամենամաքուրն է: միայն սիրոյ զգացմունքը կարող է մօտեցնել մարդոց շահերը, միայն սիրոյ տաւ գործնական հետեանքները կարող են իղէալ



համարել մարդկութեան համար Այս է Տոլստոյի ասածը, այս է նրա ցանկացածը, նրա իդէալը:

Եւ մինչդեռ Տոլստոյ ընկած իր իդէալի ետեւից, շարունակ մտածում, աշխատում, շարշարում է դրա համար, մինչդեռ նա իր ահագին հոգեկան ուժերը գործ է դնում մարդկանց մէջ բարոյական զգացմունքների զարթեցնելու համար,—նրա շուրջը, նրա աչքի առաջ կեանքը եռում, առաջ է գնում իր սովորական ընթացքով, սովորական ստոր շահերի, ինտրիգաների, եսականութեան, թշնամութեան կրքերով: Նրա քարոզած սիրով, եղբայրութեան սկզբունքները՝ դիպչելով իրական կեանքի բարդ պահանջներին՝ ջարդ ու փշուր են լինում գործնական ապէս, իսկ ոգևորած, պատկառելի ծերունին շատ անգամ նույն իսկ ծիծաղի, հեգնութեան առարկա է դառնում...